



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՄԵՐ ԺՐԱԳԻՐԸ

(Հայ Յ. Դաշնակցութեան ծրագրի
պարզ բացատրութիւնը)

Բացատրեց Վ. Խ. — Ն. Ի.

Թիֆլիս

Տպարան «Արմատուր»

1917



18-4h 9-7

ՄԵԾ ԾՐԱԳԻՐ

Ամեն դասակարգ ունի իր կուսակցութիւնը: Հարուստներն ունին իրենց կուսակցութիւնները՝ չունենորեններն էլ իրենց: Կուսակցութիւնը պաշտպանում է իր դասակարգի շահերը, կամենում է նրա կեանքը լաւացնել, նրա իրաւունքները շատացնել:

Առաջ չունենորենները, աշխատավորները կուսակցութիւն չունէին: Նրանք խեղճ, ճնշւած, անուսում մարդիկ էին, չէին հասկանում և իրաւունք էլ չունէին միանալու, կուսակցութիւն կազմելու, ոչ իրենց շահերը պաշտպանեն, կուսեն հարուստների և իշխանութեան դէմ:

Դէռ համառ էլ նրանք խեղճ ու աղքատ էին ապրում: Հարուստները նրանց հղեքում էին, պարտքերի տակ

խեղդում, հոգը ձեռքից խլում. կառավարութիւնն էլ հարուստներէն էր պաշտպանում և ննչում ժողովրդին:

Բայց կամաց-կամաց ժողովրդի մարդիկ հասկացան, որ եթէ միանան, ընկերութիւն կամ կուսակցութիւն կազմեն կարող են կռել թէ թագաւորի և թէ հարուստների դէմ: Եւ կազմեցին փոքրիկ կուսակցութիւններ: Յետոյ դրանք կամաց-կամաց մեծացան: Որովհետեւ կուսակցութեան մարդկանց հալածում էին՝ դրանք առանց գաղտնի էին աշխատում: Հիմա նրշ ազատութիւն է, կուսակցութիւններն էլ են ազատ գործում: Նրանք ազատ քարոզում են, տարածում իրենց ծրագիրները, թերթերը, իրենց գաղափարները:

Ժողովրդի կուսակցութեանը ասում են «յեղափոխական» կուսակցութիւն: Նրա համար են յեղափոխական ասում, որովհետեւ նրանք ուզում են ժողով

կամ յեղափոխել, այսինքն բոլորովին
փոխել կեանքը, կառավարութիւնը:
Նրանք ուզում են իշխանութիւնը տալ
ժողովրդին, ժողովրդական տէրութիւն
հաստատել:

Ժողովրդի կուսակցութիւնը կոչւում
է նաև «սոցիալիստական»։ Սոցիալիս-
տական են ասում նրա համար, որ ոչ
միայն իշխանութիւնն են ուզում տալ
ժողովրդին, այլ և բոլոր հարստու-
թիւնները, ինչ որ բնութեան մէջ էայ
և ինչ որ ժողովուրդը ինքը աշխատել
է։ Նրանք ասում են, որ աշխարհը բո-
լոր մարդկանց համար է, և ամեն մարդ
էլ իր աշխատանքի տէրը պէտք է լինի:
Աղքատ ու հարուստ չպէտք է լինին:
Ով որ այսպէս կատարեալ հաւատարու-
թիւն և անշահութիւն է պահանջում
դրանց ասում են սոցիալիստ։ Ուրեմն
սոցիալիստները ասում են, որ ամեն
ինչ արանից յետոյ ընկերովի, հաւասար

պէտք է լինի: Սա է նրանց ծրագիրը,
նրանց նպատակը:

Հ. Յ. Դաշնակցութիւնն էլ աշխա-
տաւոր ժողովրդի կուսակցութիւնն է:
Նա էլ է ուրեմն յեղափոխական և սո-
ցիալիստական: Նա էլ է աշխատում,
որ թագաւորների և հարուստների
բռնակալ իշխանութիւնը վերջանայ,
դրա տեղ ժողովրդի իշխանութիւն հաս-
տատուի և կատարեալ ազատութիւն ու
հաւասարութիւն լինի: Դաշնակցութեան
ծրագիրն էլ հենց այդ է ասում, նա ասում
է՝ թէ ինչպէս վատ. անարդար է ե-
ղել կեանքը մինչև հիմա և ինչպէս ար-
դար և հաւասար պէտք է լինի այսու-
հետև:

Բայց որովհետև այդ ծրագիրը, դրա
նպատակը մեծ նպատակ է դրա համար
էլ ծրագիրը երկու մասի է բաժան-
ւում. մի մասը հենց այդպէս էլ կոչւում
է — մեծ (մաքսիմում) ծրագիր, այսին-
քըն մեծ, հեռավոր նպատակի ծրագիր:

այդ նպատակն այն է, որ մի օր աշխարհիս
վրայ ամեն ինչ ընկերովի պէտք է լի-
նի, կատարեալ հաւասարութիւն ու
եղբայրութիւն պէտք է լինի, այսինքն
սոցիալիստական կեանք պէտք է լինի
իհարկէ, եթէ կեանքը դեռ շատ չի
զարգացել, եթէ մարդիկ դեռ շատ են
հաշտած՝ այդ միջոցն ապատակին միայն-
գամից չի կարելի հասնել: Դրա համար
էլ կուսակցութիւնը մի շանի այնպիսի
պահաւջներ է անում, որ մինչև սոցիա-
լիզմի լինելը, կարելի է հասնել: Այդ
նպատակները կուսակցութեան փոքրիկ
(մինիմալ) ծրագրի մէջ են մտնում:

Մենք սկսե՞ք մեծ ծրագրից: Տես-
նենք ինչ է աւելած այդտեղ:

Այդտեղ աւելած է, որ մարդիկ առաջ
մեզնից շատ ու շատ դարեր առաջ ա-
ւելի լսեղն ու աղքատ են ապրել: Նը-
րանք կատարեալ անասունի պէս են
ապրել: Ապրել են անտառներում,
դաշտերում, մերկ, անտուն, մի օր

կուշտ, մի օր քաղցած: Ապրել են որ-
սով: Յետոյ սկսել են անասնապահու-
թեամբ և երկրագործութեամբ պարապ-
ւել: Նրանց կեանքը կամաց-կամաց
դարձել է ապահով: Նրանք այլևս ամեն
բանից, գոնէ գազաններից ու կայծա-
կից, անձրևից չէին վախենում. մար-
դիկ հիմա ունէին բնակարան, անուշիկ,
միանում էին իրար հետ և սպաշտպան-
ւում, ամեն ինչ ընկերովի էր: Միասին
աշխատում էին, միասին էլ վայելում:

Յետոյ քանի զնաց կեանքը՝ աւելի
զարգացաւ, մարդիկ կրթւեցին, գոր-
ծիքներ ու գէնքեր, ճանապարհներ, քա-
ղաքներ և այլն շինեցին: Բայց բոլոր
մարդիկ չօգտւեցին կրթութիւնից և
կեանքի բարեքներին: Մարդկանց մեծ
մասը մնաց աղքատ, տգէտ և զուրկ
ամեն բանից: Այդ նրանից եղաւ, որ
ուժեղ, խորամանկ ու ճարպիկ մար-
դիկ հենց էն գլխից իրենց սեփականու-
թիւնը դարձրին հողը և մնացած

բոլոր բաները, որ մի ժամանակ բոլորինը կամ ոչ ոքինն էր: Առաջ ամեն ինչ ընկերական կամ համայնական էր, հիմա դարձաւ մասնաւոր:

Ուժեղները հարստացան, դարձան ամեն բանի տէր, իսկ մարդկանց մեծ մասը մնաց աղքատ: Աղքատները աշխատում էին՝ տէրերը վայելում: Այսպէս հասարակութեան կամ մարդկանց մէջ անհավասարութիւն մտաւ. մարդիկ բաժանւեցին դասակարգերի: Եւ հիմա ամեն մի հասարակութեան մէջ երկու մեծ իրար հակառակ դասակարգեր կան — հարուստներ և աղքատներ, իշխողներ և հալատակներ: Եւ քանի գնացել՝ դրանց միջև տարբերութիւններն այնքան մեծացել են, որ այսօր իսկապէս մի հասարակութիւն չկայ, այլ երկու հասարակութիւն — հարուստների հասարակութիւն և աղքատների հասարակութիւն:

Իրանց կարելի է այսպէս էլ բաժա-

նել՝ աշխատողների և ոչ-աշխատողների, կեղեքւողների և կեղեքողների դասակարգեր: Աշխատողների դասակարգին են պատկանում այն բոլոր մարդիկ, որոնք միմիայն իրենց աշխատանքի արդիւնքով են ապրում և ոչ մի կերպ ոչ մէկի աշխատանքը չեն շահագործում: Այդպիսի մարդկանց մենք մի խօսքով «աշխատատաւոր» կանանք: Եւ «աշխատատաւոր» կհաշւենք վարձով աշխատող բանւորին, աշխատատաւոր (չատ քիչ հող ունեցող կամ հող չունեցող) գիւղացուն, մենակ իր աշխատանքով ապրող արհեստաւորին և իր մտքի, գլխի աշխատանքով ապրող կրթւած մարդուն (ուսուցչին, գրողին և այլն):—Այս բոլոր աշխատատաւորների կամ, մի խօսքով, աշխատատաւոր ժողովրդի՝ շահերն է պաշտպանում Հ. Յ. Դաշնակցութիւնը:

Մնացած բոլոր մարդիկ ոչ-աշխատատաւոր դասակարգին են պատկանում,

դրանք են շահագործող հողատէրերը
(հարուստ հողատէր գիւղացիներ-
րից, կալւածատէրերից և հոգեւորա-
կաններից սկսած մինչև [թագաւորը] և
փողատէրերը, (կապիտալիստները, գոր-
ծարանների և զաւոյճների, բանկի, մեծ
շինութիւնների տէրերը, վաճառական-
ները և այլն):

Այսպէս պատմութիւնը մեզ ցոյց է
տալիս, որ մարդիկ են գլխից հենց
ըստմանել են դասակարգերի և հա-
րուստ ոչ-աշխատող դասակարգերը
ճնշել ու կեղեքել են աշխատաւոր դա-
սակարգերին:

Առաջ, հին դարերում հարուստները,
իշխաններն ու [թագաւորները] ժողո-
վրդին կատարեալ ստրուկի պէս բանա-
ցրել են, տուել, ծախել, սպանել: Յե-
տոյ նրանց իրենց հորան են դարձրել
և իրենց կալւածներում առանց հողի և
իրաւունքի բանեցրել: Հիմա էլ ժողո-
վրդին իբր թէ ազատութիւն են տուել,

բայց առաջւանից պակաս չեն ճնշում և շահագործում: Մեր օրերի բանւորն ու դիւղացին հին դարերի ստրուկներից ու ճորաւորից շատ քիչ բանով են տարբեր: Նրանց կեանքը դարձեալ անասունի կեանքից չի տարբերւում:

Ժիշտ է, հիմա բանւորն ու դիւղացին «ազատ» են հաշւում, բայց նրանք էլի «ստրուկ» են, որովհետեւ առանց իր աշխատանքի կատարեալ տէրը լինելու կատարեալ ազատ լինել չի կարելի: Գանի որ դիւղացին և բանւորը իրենց աշխատանքի ամբողջ արդիւնքի տէրը չեն լինի և հողագործներն էլ ամբողջ հողի տէրը՝ գրանց համար ազատութիւն չկայ:

Ազատութիւն չկայ, որովհետեւ ամեն ինչ «մասնաւոր սեփականութիւն» է: Հարուստները ամեն ինչ մասնաւոր, մենակ իրենց սեփականութիւն են դարձրել, թէ հողը և թէ գործարանները, մեքենաները և այլն: Իսկ քանի

որ աշխատանքի այդ աղբիւրներն ու միջոցները մասնաւոր սեփականութիւն են՝ գիւղացին էլ կշահագործւի, բանւորն էլ՝ Սրանք ստիպւած կլինին աշխատել, ուրիշի համար և իրենց աշխատանքի մեծ մասը տալ ուրիշին՝ հողատէրին, փողատէրին, կառավարութեանը։ Անունով ազատ կլինին, բայց իսկապէս սարուկ կլինին, որովհետեւ ով որ ոչինչ չունի և իր աշխատանքի տէրը չէ՝ նա ազատ չի կարող լինել։

Եւ հիմա ժողովրդին աւելի խիտ են շահագործում քան առաջ։ Հիմա փողատէրերը մեծ գումար են դնում, մեքենաներ առնում, գործարաններ շինում և բանւորներին շահագործում։ Գիւղերում էլ կալւածատէրերը և կառավարութիւնն են շահագործում գիւղացիներին տուրքերով, հարկերով, կոռու բէգեաւով, աքցիղներով և այլն և այլն։ Բոլոր շահագործողները—հողատէրը, փողատէրն ու դրանց իշխա-

նութիւնը՝ պետութիւնը իհարկէ ի-
րաւ հետ կապ ունենալ: Դրանց կապը
փողն է, մեծ դրամագլուխը, կամ՝
ինչպէս հիմա ասում են «կապիտալը»
և դրանց արածները արդարացնող «օ-
րէնքը»: Հողատէրն ու փողատէրն (կա-
պիտալիստը) ձեռք-ձեռքի տւած կա-
ռավարութեան հետ միասին ճնշում և
շահագործում են խեղճ ու կրակ ժո-
ղովրդին:

Բայց այդ շահագործողներից ամենից
ուժեղն ու կատաղին, իհարկէ, փողա-
տէրը կամ կապիտալիստն է: Մեծ դրա-
մագլուխը կամ կապիտալը հիմա ամե-
նամեծ ուժն է. որքան դա մեծ է՝ այն-
քան շատ է շահագործում ու հարստա-
նում, միւսներին կարողանում է աս-
պարէզից հեռացնել, և իրեն ենթարկել
նոյնիսկ կառավարութեան իշխանու-
թիւնը: Եւ իսկապէս հիմա պետութեան
մէջ իշխում են կապիտալիստները: Ա-
մեն ինչ իրենց ձեռքը ձգած նրանք

աշխատում են որքան կարելի է շատ և
էժան ապրանքներ արդիւնագործել և
մրցել ուրիշների հետ: Դրա համար էլ
նրանք աշխատում են որքան կարելի
է իրենց բանւորներին քիչ վարձատրել:
Սրանք էլ քաղցից ստիպւած ստրկա-
նում, աշխատում են ամենացած գը-
ներով:

Եւ ի՞նչ է դուրս գալիս: Գործարան-
ները արտադրում են հա՛ արտադրում,
խանութներն ու պահեստները լցւում
են ապրանքներով, ամեն ինչի լիութիւն
է, բայց ժողովուրդը, հենց այդ
բոլորը արդիւնաւերող բանւորն ու
գիւղացին ամեն ինչի պակասութիւն
են քաշում: Այդ այնքան էլ զարմանա-
լու բան չէ: Է՛ս էլ ապրանք, ինչո՞վ
գնես, երբ փող չկայ: Իսկ բանւորը
փող չունի, որովհետեւ նրան շատ քիչ
փող, վարձ են տալիս: Չէ՞ որ հենց
նրա աշխատանքից, նրա արիւն-քրտին-

քից են գոյանում այդքան հարստութիւնները, ապրանքները:

Ուրեմն հիմիկւայ հասարակութեան մէջ այսպիսի բան է պատահում — ապրանքների առատութիւն, հէքիաթային հարստութիւն, բայց և ամեն բանի աղքատութիւն. ժողովուրդը ամեն բանի նեղութիւն է քաշում հենց այն ժամանակ, երբ ամեն ինչ առատ է: Ժողովուրդը այնքան փող չունի, այնքան վարձ չի ստանում, որ գնի, ապառի եւ առատութիւնից, չափազանց շատ արտադրութիւնից կապիտալիստների համար նգնաժամ — նեղ դրութիւն է առաջ գալիս: Ապրանքները մնում են, կամ պիտի փտեն կամ պիտի էժան ծախեն:

Բայց կապիտալիստները, հարուստները խելօք և խորամանկ են. ամենագարոզ փողի ու իշխանութեան ուժն էլ իրենց ձեռքին է. իսկոյն նրանք նար ու հնար են գտնում: Կառավարու-

Թեանը ստիպում են, որ ուրիշ տէրու-
թիւնների ապրանքների վրայ մաքս
դնի, որ չմտնեն ու չմըցնեն իրենց ապ-
րանքների հետ և թողնի, որ իրենց
ապրանքները ազատ, առանց մաքսի,
էժան տանեն և ծախեն ուրիշ երկրնե-
րում: Մեծ մասամբ իհարկէ տանում
են դէպի անդարգացած երկրներ, որոնք
ոեփակած ապրանքներ չունեն, օրի-
նակ՝ Տանկաստան, Պարսկաստան, Զի-
նաստան, Ռուսաստան, Աֆրիկա և այլն:

Այսպէս են անում բոլոր երկրների
կապիտալիստները: Ամեն մէկը աշխա-
տում է, որ այդպիսի յետ մնացած եր-
կրներում մենակ իր ապրանքները
ծախեն, այսինքն մի տեսակ ոեփակած
չուկայ լինին: Եւ որպէսզի ընդ միշտ
իրենց շահերը ապահով լինեն, ստիպում
են իրենց պետութիւններին դիմել, ա-
ւելացնել զօրքն ու նաւերը և նորանոր
այդպիսի արտաքին շուկաներ կամ դու-
ղութներ (կոլոնիաներ) ձեռք բերել:

Այսպէս փոխադարձ գինւում են բոլոր
կապիտալիստական երկրները և աշխա-
տում են նորաոր անդադագացած երկրների
տիրել և այդ տեղերում իրենց առևտուրն
ու արդիւնագործութիւնը զարգացնելու
համար իրաւունքներ ու արտօնու-
թիւններ ձեռք բերել: Ուրեմն մի տե-
սակ աշխարհակալութիւններ և նւա-
ճումներ են կատարւում, որ կոչւում
են կապիտալիստական, այսինքն, տրն-
տեսական-քաղաքական աշխարհակա-
լութիւն (կամ իմպերիալիզմ) և սպաս-
նում են աշխարհի խաղաղութեանը:
Այսպէս գինւողներն ու մրցողները չեն
կարող չկուել:

Բայց դրա հետ միաժամանակ կազ-
մակերպւում և ուժեղանում է նաև աշ-
խատաւորութիւնը: Սա գիտակցում է
իր դասակարգային շահերը, հասկանում
է իր դժբախտութեան պատճառները:
Նա ըմբռնում է, որ բոլոր թշւառու-
թիւնների, չարիքների, կռիւների պատ-

Հառը հողի ու գործարանների մաս-
նաւոր սեփականութիւնն է և պահան-
ջում է վերացնել այդ ու սոցիալիս-
տական կարգեր հաստատել:

Եւ ժողովուրդը այդ ձեռք կրելի.
կուլով: Հարուստները իրենք իրենց
կամքով իրենց հարստութիւնից չեն
հրաժարւի: Երկար ու յամառ կուլով
աշխատաւոր դասակարգը կիսի յափշ-
տակողներից իր աշխատանքի արդիւնք
գործարանները և բոլորի բնական սե-
փականութիւն հողը և սոցիալիստական
կեանք կհաստատի:

Սոցիալիստական հասարակութեան
մէջ այն բոլոր բաները, ինչ որ մի
մարդու աշխատանքով չէ շինւել՝ մի մար-
դու էլ սեփականութիւն չի կարող վի-
նել. և համայնական, այսինքն բոլորի
սեփականութիւն կդառնայ հողը, գոր-
ծարանները, մեքենաները և այլն: Բո-
լոր աշխատանքի ընդունակ մարդիկ
հաւասար կաշխատեն և հաւասար էլ

բաժին կատանան իրենց աշխատանքից։
 Կատարեալ և իսկական հաւատարու-
 թիւն կլինի, որովհետեւ ամեն ինչ հա-
 տարակուսեան, ժողովրդի համար կը-
 լինի։ Ամեն մարդ իր աշխատանքի տե-
 րը կլինի։ Ձեռն լինի ոչ աղաներ, ոչ էլ
 ծառաներ, ոչ հարուստներ ոչ էլ աղ-
 քաւաներ։ Բոլոր մարդիկ, առանց որեւէ
 խտրութեան, կլինին իսկապէս ազատ
 ու հաւատար։ Մի իսկական ընկերա-
 կան ու եղբայրական կեանք կլինի։ Եւ
 «իմ» ու «քո» չի լինի։ Ամեն ինչ հա-
 տարակուսեանը, ուրեմն ամեն ինչ
 ամեն մէկինը կլինի։ Մի խօսքով՝ բո-
 լորը կաշխատեն ամեն մէկի համար
 ամեն մէկն էլ — բոլորի համար։ Միասին
 կաշխատեն, միասին էլ տէրութիւն
 կանեն։ Այս կատարեալ ընկերութեան
 են արուստ անցիւղիդ։

Անցիւղիդը միայն իսկական Արդա-
 րութիւն, ճշմարտութիւն և Նրճան-
 կութիւն կը լինի մարդկանց։ Նա կհաւ-

տառի աշխատանքի թագաւորութիւնը
 եւ միմիայն աշխատաւորների ազատ
 ու հաւատար կեանքում կթագաւորեն
 Արդարութիւնը, Սէրն ու Խաղաղու-
 թիւնը: Սոցիալիստական հասարա-
 կութեան մէջ միայն բոլոր մարդիկ
 կկարողանան ազատ ապրել, ազատ
 զարգանալ, երջանիկ լինել: Սոցիալիզ-
 մը կաղաթի բոլոր կեղեքւածներին ու
 ճնշւածներին, բոլոր հալածւածներին
 ու տառջւածներին—բանւորներին, գիւ-
 ղացիներին, կանանց երեխաներին,
 վայրենի ցեղերին և մանր ազգերին:

Մի խօսքով՝ մարդկութեան փրկու-
 թիւնն ու երջանկութիւնը կախւած է
 սոցիալիզմից:

Դա է ահա Հ. Յեղ. Դաշնակցու-
 թեան ամենամեծ նպատակը, մեծ ծը-
 րագիրը: Բայց այդ մեծ նպատակին էլ
 մի անգամից հասնել չի կարելի: Դրա
 համար էլ կուսակցութիւնը ունի ինչ-
 պէս ասացինք, մի փոքր ծրագիր էլ,

որը պէտք է այդ մեծ նպատակի — սոցիալիզմի համար ճանապարհ բաց անել:

II

Փ Ո Ք Ր Ծ Ր Ա Գ Ի Ր

1. Քաղաքական պահանջներ

Իր վերջնական և մեծ նպատակին — Սոցիալիզմին հասնելու համար՝ Հ. Յ. Դաշնակցութիւնը իր փոքրիկ ծրագրի մէջ մի քանի պահանջներ է անում, առանց որի ոչ մի նպատակի հասնել չէ կարելի: Այդ պահանջները երկու տեսակ են — 1) քաղաքական և 2) տնտեսական:

Քաղաքական պահանջները ժողովրդին իրաւունք են տալիս մասնակցել կառավարութեան գործում — ազատ խօսել, ժողովներ անել, կազմակերպւել, ընտրել-ընտրւել և այլն, իսկ տնտեսական պահանջները աշխատում են՝ մինչև

սոցիալիզմի իրականանալը որքան կարելի է ժողովրդի գրութիւնը լաւացնել: Առանց այս պահանջների, առանց այդ պայմանների սոցիալիզմ չի լինի: Ուրեմն եթէ ուզում ենք մեր մեծ ծրագիրը իրականացնել, մեր սոցիալիստական մեծ նպատակին հասնել՝ պէտք է աշխատենք մեր փոքրիկ ծրագիրը իրականացնել, որ երկու գլխաւոր բանի է ձգտում.— 1) Թագաւորների և հարուստների իշխանութեան տեղ ժողովրդի իշխանութիւն հաստատել և 2) ժողովրդի համար մարդավայել կեանք ասեղծել:

Առաջին նպատակին հասնելու համար Հ. Յ. Դաշնակցութիւնը պահանջում է, որ ամեն տեղ՝ թէ Ռուսաստանում, թէ Տաճկաստանում և թէ Պարսկաստանում բռնակալ միապետութեան տեղ ազատ ժողովրդապետութիւն կա: Հասարակապետութիւն հաստատելու երկրի ամբողջ իշխանութիւնը լինի ժո-

դովրդի ձեռին, սրա ընտրած ու հաւա-
նած մարդկանց ձեռին: Սրանք կհա-
ւաքւին, կկազմեն մի ժողովրդական ժո-
ղով, ժողովրդի համար օգտակար օ-
րէնքներ կտան և նրա կարիքների հա-
մեմատ էլ երկիրը կկառավարեն: Ու-
րեմն հասարակապետութեան մէջ
ժողովուրդը կթագաւորի. օրէնքներն
էլ նրանք կլինեն, իշխանութիւնն էլ,
դատարաններն էլ: Ամեն ինչ կլինի ժո-
ղովրդի կամքով:

Բայց որովհետեւ հայ ժողովուրդը ե-
րեք պետութեան մէջ է ապրում՝ Դաշ-
նակցութիւնը Տանկահայաստանի հա-
մար էլ է պահանջներ անում: Ամեն
տեղ էլ նա պահանջում է, որ ժողո-
վրդի կամ ամբողջ հասարակութեան
իշխանութիւն լինի: Այդպիսով միայն
փոքրիկ ճնշւած ազգերի, նաեւ հայ ժո-
ղովրդի իրաւունքները պաշտպանւած
կլինին: Այդ մեծ պետութիւնները կը-
կազմեն մի մի մեծ, միացեալ կամ

դաշնակցական ժողովրդական հանրա-
պետութիւններ, իսկ փոքրիկ ազգերն
էլ իրենց ազգային-կուլտուրական ինք-
նավարութիւններով կմիանան դրանց
հետ դաշնակցական կապերով: Այդ կա-
պերը ընդհանուր պետական գործերը
կլինեն. օր.[՝] երկրի պաշտպանոթիւնը,
դրամը, մաքսերը, արտաքին միջազ-
գային գործերը և այլն:

Մանր ազգերի ժողովուրդները թէ
ընդհանուր պետական գործերին—օրէն-
ադրութեան ու կառավարութեան կը-
մասնակցեն և թէ ազատ կերպով իրենց
մասնաւոր տեղական ժողովրդական ու
ազգային գործերը կկարգադրեն:

Անդրկովկասը կկազմի մի Դաշնակ-
ցական Հանրապետութիւն՝ կազմւած
ինքնավար նահանգներից կամ կան-
տոններից: Ընտրութիւնները ամեն տեղ
կլինեն ընդհանուր, հաւասար, գաղտնի,
ուղղակի և համեմատական:

Թէ Ռուսաստանում և թէ Տանկաս-

տանում կատարեալ ժողովրդական
պետութիւն հաստատելու համար՝ մեր
ծրագիրը հետեւեալ ընդհանուր ազա-
տութեան պահանջներն է տնում:

Քաղաքացիական ազատքիւններ եւ
իրաւունքներ

Որպէսզի բոլոր մարդիկ կարողանան
ազատ մասնակցել պետական գործե-
րին—ընտրեն, ընտրուեն, պաշտօնեայ
կամ պատգամաւոր լինին՝ նրա՞ք պէտք
է մի քանի հաստատուն և իրակատար
ազատութիւններ տնեն, որոնց տնում
են քաղաքացու և մարդու ընական ա-
զատութիւններ:

Մասջին՝ անգամ Ֆրանսիական Մեծ
Յեղափոխութիւնը (1789 թ.) պարզ
արտայայտեց և «յայտարարեց» այն ճշ-
մարտութիւնը՝ թէ բոլոր մարդիկ
ծնւում են ազատ ու հաւասար և
պէտք է ազատ ու հաւասար էլ մնան
իրենց իրաւունքներով: Դրանից յե-

տոյ անխտիր բոլոր մարդկանց ան-
կողոպտելի իրաւունքներն են հա-
մարւում քաղաքացիական ազատու-
թիւնները և օրէնքի առաջ հաւասար-
ութիւնը:

Դրանք են՝—խօսքի, մամուլի, խղճի,
միութիւնների և գործադուլների ազա-
տութիւն:

1. *Խօսքի* ազատութիւնն այն է, որ
ամեն մարդ, ամեն ազատ քաղաքացի
իրաւունք ունի ասելու, քարոզելու,
տարածելու, ուրիշներին յայտնելու իր
կարծիքները, իր գաղափարները: Ա-
ռանց դրան նա ոչ ազատ քաղաքացի
կարող է համարւել, ոչ էլ գործ կատա-
րել:

2. *Մամուլի* ազատութիւնը լրացնում
է խօսքի ազատութիւնը: Դա էլ գրա-
ւոր կերպով—նամակով, դիրք կամ
թերթ (մամուլ) հրատարակելով իր
մտքերը արտայայտելու և տարածելու
ազատութիւն է նշանակում: Պարզ է,

որ մէկը առանց միւսի, խօսքի ազատութիւնը առանց մամուլի ազատութեան անհասկանալի է:

Ինչպէս որ մարդկանց մտքերը արդեւ չի կարելի՝ այդպէս էլ չի կարելի, չպէտք է արգելիլ, որ նրանք իրենց մասձաձները ազատ գրեն և այլն:

3. Թղթի կամ դաւանանքի (կրօնի) ազատութիւն նշանակում է, որ ամեն մարդ իրաւունք ունի դաւանելու, հաւատալու իր ազատ խղճով ու հոգով ինչ բանի որ ուզում է: Դա նշանակում է, որ մարդիկ կրօնի կատարեալ ազատութիւն պէտք է ունենան և ոչ ոքի իր կրօնի համար չպէտք է որևէ կերպ հալածել, եթէ նոյն իսկ նա ոչ մի կրօնի էլ չհետևի կամ ինչպէս ասում են, «անասուած» լինի:

4. Միութիւնների ազատութիւնն ամեն մի ազատ քաղաքացու իրաւունքն է. դա նշանակում է, որ ազատ քաղաքացիները միշտ էլ կարող են հաւաք-

ւել, ժողովներ անել ընկերութիւններ,
միութիւններ կամ կուսակցութիւններ
կազմել: Առանց այս իրաւունքի աշ-
խատաւոր դատակարգերը ոչ տրնե-
տակցական, ոչ գիւղացիական միութ-
իւններ, ոչ կուսակցութիւններ կարող
են աւնենալ:

5. Գործադուլի ազատութիւնը բան-
ւոր դատակարգի ամենամեծ իրաւունքն
է. առանց դրան նրանք կապիտալիստ-
ների դէմ դատակարգային կռիւ մղել
չեն կարող:

6. Անընաբարութիւն անձի, կամ
ինչպէս ոտգորտարար ասում են ռուսի
տնտեսամիտքիսւթիւն», նշանակում է,
որ ամեն քաղաքացու առանց դատա-
րանի որոշման կամայականօրէն ոտախ-
կանութեան կամ ոտախկանական միջո-
ցով ձերբակալել, աքտարել և այլն չի
կարելի: Առանց դատարանի— ոչ մի
պատիժ: Առանց այս ազատութեան
միւս ազատութիւնները դատարկ խօս-

քեր են. միւս ազատութիւններից
մարդ օգտուել չի կարող, եթէ ամեն
որպէս նրան, օրինակ՝ խօսելուց, գրե-
լուց առաջ, ժողովի ժամանակ և այլն
կարելի է ձերբակալել: Դրա համար էլ
անձի, քաղաքացու անձեռնմխելիու-
թիւնը քաղաքացիական ազատութիւն-
ների հիմքն է կազմում:

7. Այդ գլխաւոր իրաւունքը լրա-
ցնում և հաստատում են ընտանիքի և
նամակազրութեան ազատութիւնները:
Այդ նշանակում է, որպէսզի մարդ իս-
կապէս ասել կարողանայ՝ թէ ես ազատ
քաղաքացի եմ, պէտք է անբռնաբարե-
լի, անձեռնմխելի լինի թէ նրա ընտ-
նականը և թէ նամակազրութիւնը: Ա-
ռանց դատարանի որոշման քաղաքա-
ցու տունը խուզարկել կամ նամակը
բաց անել չի կարելի:

8. Եւ վերջապէս աղքատ քաղաքա-
ցին պէտք է տեղափոխւելու ազատու-
թիւն ունենայ, — և՛ քաղաքակց մի այլ:

Քաղաք, մի պետութիւնից մի այլ պե-
տութիւն գնալու ազատ իրաւունք
պէտք է ունենայ: Որպէսզի նա կարո-
ղանայ ազատ գործ նարել, առնաւոր
անել կամ հասարակական գործ կատա-
րել պէտք է առանց թոյլատուութեան
գնայ, ուր որ կամենում է: Դրա հա-
մար պէտք է ոչնչացնել ազատութիւ-
նը կաշկանդող անցաւրերը (պատարտ-
ները):

Ընտրական իրաւունքներ

Քաղաքացիական ազատութիւնները
լրիւ չէին լինի, եթէ մարդիկ լրիւ ըն-
տրական իրաւունքներ չունենային:
Որպէսզի հասարակական և պետական
կեանքին կարողանան մասնակցել և
իսկապէս ժողովրդական իշխանութիւն
հաստատել, քաղաքացիները պէտք է
թէ ընտրւել և թէ ընտրել կարողանան:
Մեր ծրագիրը ամենալրիւ ընտրական
իրաւունքներն է պահանջում: Մինչդեռ
միւս ծրագիրները միայն 4 ընտրական

իրաւունքներ են պահանջում (քառանգամ), մերը դրա վրայ մէկն էլ է աւելացնում—համեմատական ընտրութիւն—(հինգանգամ)։

Այդ մասին մեր ծրագրի մէջ առած է, որ բոլոր ընտրութիւնները պէտք է լինին—ընդհանուր, հասարակ, ուղղակի, գաղտնի և համեմատական քւէարկութեան սկզբունքով՝ առանց ցեղի, կրօնի և սեռի խտրութեան։ Այդ նշանակում է, որ այս կամ այն ցեղին կամ ազգին, կրօնի և սեռին (տղամարդ թէ կին) պատկանելը չի դրկում մէկին ընտրական իրաւունքներից։

1. Ընտրութիւնները պէտք է լինին նախ՝ ընդհանուր. այդ կնշանակի, որ ամեն մարդ-քաղաքացի ընտրելու իրաւունք ունի, ով 20 տարեկան է դարձել. ամեն մարդ, լինի նա ազգաւ թէ հարուստ, ուսումնական թէ անգիտ, ուսումնառ թէ այլազգի։ Միայն նրանք չեն կարող ընտրել կամ ընտրւել, ովքեր կամ 20

տարեկանից փոքր են, կամ խելագար,
կամ էլ հասարակութեան դէմ ծանր
յանցանք են կատարել: Եւ իսկապէս,
ով կազմի, ոչ երեխաները կամ խելա-
գարները խառնուին հասարակութեան
գործին: Դրա համար էլ, չնայած որ
այդպիսի մարդիկ չեն մասնակցում,
ասում ենք ընտրութիւնը ընդհանուր է:

2. Ապա ընտրութեան իրաւունքը հա-
սարար պէտք է լինի. այդ կնշանակի,
որ տմեն մարդ, տմեն քաղաքացի—հա-
րաւատ թէ ազքառ — միայն մի ձայն
ունի. ոչ ոք աւելի ձայն տալու, օր՝
2, 3, 4 և այլն, իրաւունք չունի: Դրա
համար ասում ենք—մի մարդ՝ մի ձայն:

3. Ընտրութիւնը, պէտք է ուղղակի
լինի, այսինքն ում որ ժողովուրդը կա-
մենում է ընտրել իրեն ներկայացուցիչ
կամ պատգամաւոր՝ նրան էլ պէտք է
ընտրի: Ել չպէտք է առաջ մէկին ընտ-
րի, որ նա էլ մի ուրիշին ընտրի. ուս-
ուղղակի ընտրութիւն չի լինի, այլ ա-

նուդդակի: Օր.՝ եթէ ժողովուրդը ուզում է Պետրոսին ընտրել իրեն պատգամաւոր՝ նրան էլ պէտք է ընտրի, և ոչ թէ առաջ Մարկոսին պէտք է ընտրի, որ պա՛հօր իր հողմից Պետրոսին ընտրի:

4. Ընտրութիւնը պէտք է գաղտնի լինի, անուաները գրելով և գաղտնի տալով կամ այլ նշաններով: Սա էլ նրա համար է, որ օրինակ գործարանատէրը, տանուտէրը, չինովնիկը չիմանան՝ թէ գիւղացին կամ բանւորը ում է ձայն տալիս. պարզ բան է, որ իմանան՝ կարող են սրանց որեւէ ձեւով նեղացնել, գործից հեռացնել և այլն: Որպէսզի ժողովրդի մարդիկ իրենց ուզած մարդին ընտրել կարողանան՝ պէտք է գաղտնի ընտրեն:

5. Եւ վերջապէս ընտրութիւնը պէտք է համեմատական լինի: Այս էլ շատ դժւար հասկանալի բան չէ: Առէ՛ք մի գիւղում կամ գործարանում կան 3000

մարդ: Ասենք դրանք պէտք է 3 պատ-
գամաւոր ընտրեն: Եթէ ընդհանուր
և հաւասար ընտրութիւն լինի՝
2000 հոգին, որ միշտ մեծամաս-
նութիւն է, եթէ միւս հազարին
հակառակ է, կարող է միշտ էլ իր
ուզած մարդին անց կացնել, իսկ էն
1000 հոգին չեն կարող մարդ անցկա-
ցնել, դրանց ձայները կխեղդուի, ուշեմն
ներկայացուցիչ չեն ունենայ: Արդարու-
թիւնը պահանջում է, որ էս 1000-ն էլ
մի մարդ ընտրեն. 2000 հոգին 2 մարդ,
1000 հոգին մէկ մարդ: Ուրեմն ամեն
կողմը կընտրի իր թւի համեմատ պատ-
գամաւորներ. դրա համար էլ ասում
ենք ընտրութիւնը պէտք է լինի համե-
մատական:

Ահա այսպէս պէտք է լինին ընտ-
րութիւնները, որպէսզի քաղաքացիներ-
ը, մանաւանդ խեղճ ու աղքատ ժողո-
վուրդը իր ճանաչած, սիրած, վստահե-
լի մարդկանց ընտրել կարողանան, որիւ

շահերը տաշտպանեն: Մինչև այսպէս
այս հինգ պայմաններով—ընդհանուր,
հասարակ, ուղղակի, զաղտնի և համե-
մատական չինին ընտրութիւնները—
ժողովուրդը երբէք էլ իր ուղած օրէնք-
ներն ու կառավարութիւնը չի տեսնի,
ուրեմն միշտ էլ խեղճ ու աղքատ կապրի:

6. Անմիջական ծայնատուութեան ի-
րատւնը.— Բայց դա բաւական չէ: Որպէս-
զի իսկապէս ժողովուրդը կարողանայ
իր խօսքը անցկացնել և իմանայ հառ-
տատ՝ թէ իր ուղածը կկատարւի՝ պէտք
է ինքը ուղղակի, առանց պատգամա-
ւորների կամ ներկայացուցիչների միջ-
նորդութեան, մասնակցի և ձայն տայ
պետութեան գլխաւոր գործերը, մա-
նաւանդ օրէնքները որոշելիս: Պատգա-
մաւորն էլ մարդ է կարող է, խօսքը
փոխել, կաշառւել և Հիմնադիր ժողո-
ւում կամ պարլամենտում (օրէնսդիր
ժողովում) էն չափել, ինչ որ իրեն
պատւիրել են: Որպէսզի այսպիսի բա-

ներ չպատահին՝ լաւ կլինի, որ ժողովուրդը ինքն անձամբ մասնակցի և ձայն տայ պետութեան գլխաւոր գործերի քննութեան ժամանակ։ Սրան առում են ժողովուրդը պէտք է անմիջական ձայնաւութեան (բէֆերենդումի) իրաւունք ունենայ։

Ց. Եւսիսաճեռնութեան իրաւունք ժողովուրդը կարող է անմիջապէս իր ձայնը լսելի դարձնել նաեւ գլխաւոր կերպով—խնդիրներով և առաջարկներով։ Ժողովուրդը կարող է գրել, որ այսինչ կամ այնինչ բանը այսպէս լինի։ Սրան առում են, որ ժողովուրդը առաջարկներ անելու (պետիցիայի) իրաւունք պէտք է ունենայ։

Բայց այլ բան են կենդանի խօսքը ու ձայնը երես առ երես, այլ բան է գրածը։ Գրածը աւելի հեշտ է մեքենայան առածը։ Կասեն սա լաւ է, բայց դժւար է, ինչպէ՞ս կարող է ամբողջ ժողովուրդը հաւաքել մի տեղ և ձայն

տալ, էն էլ Ռուսաստանում, թէ իրենք
ինչ են ուզում: Ճիշտ է, այդպէս դժ-
ւար է: Բայց եթէ լաւն այդ է, դրա
համար էլ պէտք է հնարներ դնել:

Իհարկէ, որ Ռուսաստանի պէս մեծ
պետութիւնների մէջ դժւար, անկարե-
ւի բան է, որ ամբողջ ժողովուրդը հա-
ւաքւի մի տեղ և օրէնքների ու վճիռ-
ների տակիս ձայն ունենայ: Դրա հա-
մար էլ պէտք է մեծ պետութիւնները
բաժանեն ինքնավար մասերի—
փոքրիկ պետութիւնների: Սրանք իրենց
ներքին գործերում անկախ կլինեն, այ-
սինքն իրենք իրենց կկառավարեն,
բայց ընդհանուր գործերում—օր՝ երկ-
րի պաշտպանութիւն, առևտուր, պոստ,
դրամ և այլն, կմիանան, կկազմեն մի
մեծ պետութիւն: Այսպիսի պետութիւ-
նը կամ, ապենք, հասարակապետու-
թիւնը կլինի փոքր պետութիւնների
միութիւն՝ կամ դաշնակցութիւն (Ֆե-
դերացիա): Այսպէս իրար հետ միա-

ցած պետութիւնները կոչուում են դաշ-
նակցական պետութիւններ, իսկ զրանց
միութիւնը դաշնակցական միապետու-
թիւն—օր[՝]։ Գերմանիան, կամ դաշ-
նակցական հասարակապետութիւն—
Շւէյցարիան և Հիւսիսային Ամերի-
կայի Միացեալ (կամ՝ Դաշնակցական)
պետութիւնները։

Միայն դաշնակցական (Փեդերատիւ)
հասարակապետութեան մէջ կարող են
ժողովուրդները պաշտպանել իրենց շա-
հերն ու իրաւունքները։ Միայն այս-
պիսի պետութեան մէջ նրանք կարող
են հաստատ համոզւած լինել, որ ի-
րենց իշխանութիւնը անխախտ կլինի։

Ազգային ինքնորոշման իրաւունք.—

Քաղաքացիական ազատութիւններն ու
իրաւունքները լրիւ չեն լինի, եթէ քա-
ղաքացին որեւէ կերպ, քաղաքականա-
պէս, կուլտուրապէս, լեզուով և այլն
ճնշւի։ Ուստի և ազատ և իրաւական

պետութեան մէջ բոլոր քաղաքացիները,
ինչ ազգի և ինչ կրօնի էլ որ պատկա-
նեն, ոչեւք է ամեն բանում մեծ ազգե-
րին պատկանող քաղաքացիներին հա-
ւասար հանաչւոն: Դասային արտօնու-
թիւնների ու առանձնաշնորհումների
հետ պէտք է ոչնչանան նաև գլխաւոր
ազգերի և կրօնների (կամ եկեղեցինե-
րի) արտօնութիւնները: Գերիշխող և
արտօնեալ ազգեր ու եկեղեցիներ չը-
պէտք է լինեն, ինչպէս որ արտօնեալ
և ոչ արտօնեալ քաղաքացիներ էլ չը-
պէտք է լինեն: Ամեն ազգ, որքան էլ
դա փոքր լինի, իրաւունք պէտք է ու-
նենայ ինքն իր ազգային-կուլտուրա-
կան (դպրոցի, լեզւի, կրօնի և այլն)
հարցերը որոշելու և այդ կարիքներին
բաւարարելու համար օգտուել նահան-
գային կամ պետական գանձարանի մի-
ջոցներից:

Ազգերի ինքնորոշման իրաւունքը
թերի կլինէր, եթէ նաև փոքրամաս-

նութիւն կազմող, ամենափոքր ազգերի
լեզուները ազատ և հաւասար գործա-
ծութիւն չունենային պետական բոլոր
հիմնարկութիւնների մէջ: Ամեն ազգի
մարդ պէտք է իր ազգային կամ մայ-
րենի լեզւով իր մտքերը արտայայտի և
իր դատը պաշտպանի բոլոր հիմնար-
կութիւնների մէջ: Պաշտօնեաները
միշտ պէտք է իմանան տեղական եր-
կու գլխավոր լեզուները:

Փողովրդական դատարան. — Դատա-
վարութիւնը պէտք է լինի տեղական
ժողովրդի լեզւով, ձրի, արագ և ար-
դար: Դատաւորները ժողովրդական
մարդիկ պէտք է լինին և զստանելի:

Փողովրդական կրթութիւն. — Ուսու-
մը պէտք է լինի ընդհանուր, պարտա-
դիր և ձրի մինչև 16 տարեկան հասա-
կը: Ոչ ոք անուսում չպէտք է մնայ:
Չունևորներին պէտք է հասարակու-
թիւնը նաև ձրի շօր, նաչ, գրքեր և
այլն տայ: Դպրոցը պէտք է լինի ժո-

դովրդական և «աշխատաւորական»
Այդտեղ ժողովրդի զաւակները ոչ մի-
այն գրել-կարդալ և մտածել ու հաշուել,
այլ և աշխատել պէտք է սո-
վորեն — արհեստներ ու արւեստներ
պէտք է սովորեն, որ պիտանի քաղա-
քացիներ դառնան:

Եկեղեցին բաժանել պետութիւնից. —
Որպէսզի ամեն քաղաքացի խկապէս
խղճի, հաւատի ազատութիւն ունենայ
և աշխարհիկ, ազատ կրթութիւն ստա-
նայ՝ մի պահանջ էլ ենք անուշ. եթէ
կրօնի կատարեալ ազատութիւն պէտք է
լինի, ուրեմն մի ընդհանուր պարտա-
դիր կրօն (կամ եկեղեցի) չի կարող լինել:
Չպէտք է այդ գէպքում պետական,
պաշտօնական կրօն լինի, որ սա չենչի
միւս կրօնների հետևողներին: Որպէս-
զի կրօնը ամեն մարդու իր մասնաւոր
կամ անհատական խղճի գործը լինի և
քաղաքացին ազատ պաշտի՝ ինչ ուզում
է, պէտք է եկեղեցին բաժանել պե

տութիւնից: Այդ կնշանակի, որ պետա-
կան, գերիշխող կամ արտօնեալ եկե-
ղեցի չպէտք է լինի, որ միւսներին
ճշիւ եկեղեցին հաւատացողներին մաս-
նաւոր համայնական գործը կլինի և
նրանց միջոցներով էլ կպահւի:

Այդ պահանջն էլ թերի կլնէր, եթէ
դպրոցն էլ եկեղեցուց չբաժանենք: Որ-
պէսզի ժողովրդի զաւակները ազատ,
գիտական և աշխարհիկ կրթութիւն
ստանան՝ պէտք է դպրոցը եկեղեցուց
միանգամայն անկախ լինի և հասարա-
կական ամենադժբաւոր հիմնարկու-
թիւններից մէկը դառնայ:

Ժողովրդական զօրք կամ միլիցիա.—
Մշտական՝ կազարմայական զօրքի փո-
խարէն պէտք է ժողովրդական զօրք
լինի, որին ասում են միլիցիա: Սրա
և մշտական զօրքի տարբերութիւնն
այն է, որ զինւորներին չեն հաւա-
քում և կազարմանւորում փտացնում,

բթացնում ու փշացնում: Ամեն ատող
քաղաքացի որոշ ժամանակ—մէկ երկու
ամիս ծառայում է իր շրջանի սահ-
մաններում. յետոյ էլ տարեկան մի եր-
կու շաբաթով զինավարժութիւն է կա-
տարում, որ չմոռանայ: Միլիցիայի
զինւորը հիւանդութեան դէպքում թո-
շակ է ստանում բանւորի օրավարձի
չափով ու հաշւով: Միլիցիայի զինւոր-
ներն ուրեմն ոչ իրենց ընտանիքին են
վնասում, ոչ էլ պետութեանը, ինչպէս
մշտական զօրքի զինւորները, օրոնք
տարիներով ոչ մի աշխատանք չեն
անում: Իսկ երկրի կամ պետութեան
սահմանները վտանգւելու դէպքում մի-
լիցիան, այսինքն այդպիսի երկրի բոլոր
զինւոր-քաղաքացիները աւելի լաւ ե-
տիրով են պաշտպանում իրենց երկիրը
քան մշտական զօրքը, ինչպէս օրինակ
Շվեյցարիայի ժողովուրդն և ժողովրդա-
կան զօրքը:

II

Տնտեսական պահանջներ

1. Առաջին մեծ տնտեսական պահանջը հողերի համայնացումն է։ Այդ նշանակում է, որ հողը համայնքի կամ հասարակութեան սեփականութիւնը պէտք է լինի և ոչ թէ մասնաւոր մարդկանց սեփականութիւն։ Այս պահանջը առաջ է դալիս այն համոզմունքից, որ ա) հողը իբրեւ բնական հարստութիւն ոչ ոքի մասնաւոր սեփականութիւնը լինել չէ կարող՝ ինչպէս օգն ու ջուրը և բ) մինչև սոցիալիզմի իրականացումը, մինչև արդիւնադործութեան միւս միջոցների— գործարանների, մեքենաների, հասարակական շէնքերի և այլն համայնական սեփականութիւն դարձնելը հնարաւոր և անհրաժեշտ է հողի համայնացումը։

2. Հողի համայնացումը վերացնում է այժմից և եթ դրա մասնաւոր սեփականութիւնը, տալիս է այդ հողա-

գործ ժողովրդին տառնց զրա համար
վճարելու նախկին տէրերին և արգե-
լում է հողը վաճառքի առարկայ դարձ-
նել: Հողը առնել, ծախել, կտակել և
ժառանգել չի կարելի: Հողից միմիայն
իր աշխատանքով մշակելու համար կա-
րելի է օգտւել: Այդ միայն այնքան ժա-
մանակ կարելի է պահել, որքան որ
մշակում ես:

3. Հողի համայնացնան պահանջը
ասում է—հողը նրանն է, ով աշխա-
տում է հողի վրայ, ով որ հողագործ
չէ՝ նա էլ հողատէր լինել չէ կարող:
Ուստի և պահանջում է, որ նաև ար-
քունական (կազեօննի), կալւածատա-
րական (թագաւորի, իշխանների, խա-
ների, բէգերի և այլն) և առհասարակ
բոլոր տեսակի հողերը իրենց ներքին և
արտաքին գանձերով (հանքերով, ջրե-
րով, անտառներով և այլն) խլել իրենց
նախկին տէրերից և դարձնել աշխա-
տաւոր ժողովրդի սեփականութիւնը:

4. Հողից օգտւելու իրաւունք ու-
նեն միմիայն աշխատաւոր ընտան, քնե-
րը: Ամեն մի աշխատաւոր մշակելու
համար այնքան հող է ստանում հա-

մայնքից, որ կարողանայ իր աշխատանքով ապրել առանց ուրիշի աշխատանքը շահադործելու: Ուրեմն հողի համայնացումը ամբողջ հողը տալիս է աշխատատեղերին: Աշխատատեղերն էլ իրենց կարիքի և աշխատանքի համեմատ հող են ստանում մշակելու համար: Այսպիսով գիւղացիութեան գրութիւնը հետզհետէ կրաւանայ, համայնական սեփականութիւնը գիւղացիներին կվարժեցնի համայնական-ընկերական աշխատանքի և առհասարակ համայնական կեանքի և այդպիսով կպատրաստի սոցիալիստական կեանքի համար:

5. Ի՞նչ թէ որ հողերը, երբ ինչպէս պէտք է բաժանել աշխատատեղնականների մէջ և թէ որքան ժամանակով և ինչպէս պէտք է օգտւել հողերից—այդ գիւղական և քաղաքային համայնքները պէտք է որոշեն: Ամեն տեղ հողերն ու պայմանները միատեսակ չեն: Ուստի ամեն տեղի հասարակութիւնը ինքը արդարութեամբ պէտք է տեղական պայմանների համեմատ այդ հարցերը որոշի:

6. Հողերի բաժանումն ու գրանցից
օգտուելը կանոնաւորելու համար կըն-
տրւեն կենտրոնական և շրջանային վար-
չութիւններ: Սրանք իրաւունք կունե-
նան ժամանակ առ ժամանակ հողերի
հաւասար ու արդար բաժանումներ
կատարել՝ նկատի ունենալով հողի լաւն
ու վատը, «տարըմէջ» ու «միջովի» վա-
րելը, շրջանների բաժանելը և այլն:

7. Համայնքի վարչութիւնները պէտք
է կարգադրեն ընդհանուր համայնա-
կան կամ հասարակութեան պատկա-
նող հողերը, անտառները, արօտատե-
ղերը, ջրերը, ձկնորսութիւնն ու որ-
սորդութիւնը և այլն: Իրանցից ստա-
ցած եկամուտներն էլ կըործադրեն ամ-
բողջ համայնքի կարիքների համար՝ օ-
րինակ՝ դպրոցների, հիւանդանոցների,
հանապարհների և այլն:

8. Իսկ հանքերն ու նման թանգ-
արժէք և շատ կարեւոր հարատուութիւն-
ները ամբողջ պետութեան սեփական-
ութիւնը կլինեն: Բայց գրանցից ստա-
ցած եկամուտները դարձեալ ժող-
ովրդի կարիքների համար կծախ-
աւին: Իրանցով ամբողջ պետութեան

ժողովրդի համար համալսարաններ, հի-
ւանդանոցներ, երկաթուղիներ, ջրանցք-
ներ, ընդհանուր պետական հաստա-
տութիւններ և այլն կշինէին: Ուրեմն ի
վերջոյ ընդհանուր պետական հարստու-
թիւններից էլ ժողովրդական և իրա-
ւական պետութեան մէջ ժողովուրդն է
օգտուում:

9. Պէտք է վերացնել անուղղակի
հարկերը.—Բռնապետութիւնը հարկե-
րով կողոպտում էր ժողովրդին: Նա
ամեն ինչ առնում է, քայքայ ոչինչ չէ
տալիս: Բայց նա ոչ միայն ուղղակի
հարկեր է առնում, օրինակ գլխահարկ
կամ հողահարկ, այլ և անուղղակի
հարկեր: Եւ ժողովուրդը միայն, ուղ-
ղակի՞ հարկեր տալն է սկստում, ան-
ուղղակի հարկերը այնպէս թաքուն, ոչ
ուղիղ ճանապարհով ու ձեւերով են առ-
նում, որ ժողովուրդը այդ չի հասկա-
նում, նա միայն այն է նկատում, որ
աղքատանում է, չի կարողանում ապ-
րել: Իսկ թէ որն է իսկական պատճա-
ռը իր աղքատութեան՝ նա չի հասկա-
նում: Դրա պատճառը գլխաւորապէս
անուղղակի հարկերն են, որ համարեա

Թալան է, մի տարափելի Թալան որը
այնպէս է կատարւում, որ Թալանւողը
շատ ուշ է այդ նկատում, բայց էլի
լաւ չի հասկանում՝ թէ ով և ինչպէս
իրեն Թալանեց։ Այդ Թալանը կամ ան-
ուղղակի հարկերը աւանում են ապրանք-
ների և կենսամթերքների վրայ մաքս,
աքցիզ և այլն դնելով, այսինքն ապ-
րանքների դները աւելացնում են պետա-
կան գանձարանի օգտին, որից արդիւ-
նաբերողն ու առևտրականը ոչ մի
վնաս չեն քաշում. վնաս տեսնում է
միայն աւանողը, այն էլ աղքատ դասը,
որովհետև անուղղակի հարկերը դնում
են ամենապէտքական բաների վրայ.
Օր.՝ հացի, շաքարի, թէյի, յիսախոտի
և այլն վրայ։ Օր. եթէ շաքարը գործա-
րանատիրոջ վրայ ֆունտը 8 կոպ. է
նստում՝ 5—6 կոպ. էլ պետութիւնն է
թանգացնում իբրև «ակցիզ», մաքս
կամ անուղղակի հարկ, որ պետութեան
գանձարանն է դնում։ Վաճառականն
էլ այդ բոլորի վրայ իր օգուտն է
գնում և թանգացրած ծախում. ժողո-
վուրդն էլ ուղի-շուղի գնում է և բոլո-
րին էլ օգուտ և «անուղղակի» ձևով
հարկ տալիս։

Ահա այդ «անուղղակի» տնաքանդ հարկերն են, որ պէտք է վերացնել: Այդպիսով շատ կէժանանտն կենսական մթերքները և ժողովրդի գրութիւնը կլաւանայ: Իսկ դրա փոխարէն հարկ պէտք է դնել զարգարանքների և շոայլ-ութեան առարկաների վրայ, որ միայն հարուստ դասի տարդիկն են գործածում:

10. Եթէ «անուղղակի» հարկերն էլ վերացնենք՝ դարձեալ հարկերը մեծ մասամբ ժողովրդի վրայ են ծանրանում. սովորական կամ «ուղղակի» հարկերը, ինչպէս որ՝ գլխահարկն ու հողահարկը ժողովրդի դրպանից միլիոններ են հանում և լեցնում պետութեան դանձարանը: Հարուստի տւածը դրա համեմատ չնչին բան է: Եթէ, օրինակ, մի գիւղացի, որ տարեկան 500 ռ. եկամուտ ունի, 50 ռ. հարկ է տալիս, ինչի տարեկան 500 հազար եկամուտ ունեցող մի հարուստ՝ 500 ռ.— պարզ է, որ գիւղացին անհամեմատ շատ շատ է տալիս: Դրա համար էլ պահանջում ենք, որ ուղղակի հարկեր առնելու ձևն էլ փոխւի. ամեն մէկը

վճարի—իր կարողութեան կամ եկամտի համեմատ և հարկերի չափը աւելանան հարողութեան չափը հետ. դրան տուած են եկամտային մեծացող կամ շատացող հարկ. որքան որ եկամուտը շատ է կամ հարողութիւնը մեծ՝ այնքան էլ մարդու հարկերն են շատանում տոկոսի համեմատ. Օր.՝ ասենք 10 հազար ռուբլի ունեցողը վճարում է իր կարողութեան 10 տոկոսը, 20 հազար ունեցողը կվճարի 15 տոկոս, 100 հազար ունեցողը—25 տոկոս, 500 հազար ունեցողը—40 տոկոս և այլն. Իսկ որպէսզի չունևորները բոլորովին ազատ լինեն հարկերից՝ որոշ չափից, ասենք 1000 ռուբլուց պակաս եկամուտ ունեցողներին պէտք է ազատեն հարկերից:

11. Կենսամթերքների և այլ ապրանքների վրայ դրած «անուղղակի» հարկերը խեղդում են ժողովրդին նրա համար, որ ուրիշ երկրներ ց, արտասահմանից այդպիսի ապրանքները կամ չեն թողնում մեր երկիրը մտնեն՝ կամ էլ խիստ թանկացնում են հենց սահմանի վրայ մաքս դնելով: Օր.՝ ասենք Գերմանիան չաքար է ուղղում բերել

Ռուսաստան. նրա շաքարը այստեղ հա-
նապարհածախսով և այլն կործենայ
11 կոպ., բսկ ռուսական շաքարը՝ 14
կոպ. այդ ձեռնառու չի լինի ոչ գործա-
րանատէրերին ոչ էլ պետութեանը,
որովհետեւ ժողովուրդը էժան շաքարը
կառնի: Այլ պէտ էլ միւս բաները: Իրա
համար էլ գործարանատէրերն ու կառա-
վարութիւնը խօսք մէկ արած պայման
են կապում և կամ սահմանի վրայ
թանգացնում են արտասահմանեան է-
ժան ապրանքները մաքս դնելով կամ
ուղղակի արգելում են, եթէ այդ ապ-
րանքից իրենց երկրում չատ կայ: Ժո-
ղովուրդը ստիպւած առնում և սալա-
ռում է իր երկրի թանգ ապրանքները:
Կառավարութեան դրած այդպիսի մաք-
սերը, որ ազատում են իր երկրի հա-
րուստների ապրանքները մրցութիւնից
և էժանութիւնից, կոչւում են հովա-
նաւորող կամ պաշտպանող մաքսեր:
Եւ որովհետեւ այդպիսի մաքսերը պաշտ-
պանում են միայն գործարանատէրե-
րին ու ապրանքատէրերին և ժողո-
վրդին նրանց որսը դարձնում, ուստի
և պահանջւում է վերացնել «հովանա-
ւորող մաքսերը»:

12. Ապա պէտք է վերացնել նաև այն բոլոր անարդար, անիրաւ տուրքերն ու աշխատանքները, ինչպէս «օլամը», «բէգեստը» և այլն, որ ժողովրդի նորա ժամանակաւանից մնացած բաներ են. առանց վարձի ժողովուրդը ոչ ոքի, ոչ էլ պետութեան համար մի բոսէ չպէտք է աշխատի:

Եւ ժողովրդին օգնելու համար, որ նա պարտքերի տակ չընկնի և վաշխառուներից կեղեքւի, պէտք է էժան վարկ (կրեդիտ) բաց անել նաև գիւղերում: Այդ էժան վարկի ընկերութիւններից գիւղացին, աշխատաւորը պէտք է կարողանայ շատ չնչին տոկոսով փող, պարտք վերցնել իր աշխատանքները կատարել և մաս մաս, առանց նեղւելու վճարել:

13. Որովհետև գիւղացու տնտեսութիւնը միշտ էլ ենթակայ է բնական աղէտների ու պատահարների, որովհետև մորձխը, երաշտը, կարկուտը, հեղեղը, ցուրտը և այլն նոյն իսկ մի քանի բոսէում կարող են ոչնչացնել նրա ամբողջ հարստութիւնը ու նրան սովամահ անել՝ պէտք է պետութիւնը

ապահովագրի նրա տնտեսութիւնը:
Վնասների և դժբախտութիւնների դէպ-
քում պետութիւնը պէտք է օգնութեան
հասնի գիւղացիներին նրանց կարիք-
ների համեմատ:

14. Պէտք է յօգուտ ժողովրդի օգ-
տագործել հասարակական նշանակու-
թիւն ունեցող բաները, օրինակ՝ ճանա-
պարհները, լուսաւորութիւնը (էլեք-
տրական կայարանները և այլն), սպան-
դանոցը, հիւրանոցները, ամառանոց-
ները, փուռերը: Նշանց եկամուտով
պէտք է բարձրացնել ժողովրդի տըն-
տեսական և կուլտուրական վիճակը:

15. Առանձնապէս պէտք է պարկ
տալիօօսպերատիւ ձեռնարկութիւններին
և ոչ միայն սպառողական, այլ և արդիւ-
նագործական: Կօօսպերատիւները երկու
մեծ նշանակութիւն ունեն. նախ՝ դը-
րանք տնտեսապէս մեծ օգուտ են տա-
լիս ժողովրդին և երկրորդ՝ անցիպա-
պէս դաստիարակում են նրան: Ար-
դիւնագործական կօօսպերատիւները այդ
տեսակէտից աւելի մեծ նշանակութիւն
ունեն, որովհետեւ դրանք թէ աւելի
մեծ օգուտ են տալիս և թէ անմիջա-

կան աշխատակցութեամբ ընկերական,
գամայնական ոգի զարգացնում ժո-
ղովրդի մէջ: Կօօպերատիւները և այլ
հիւղացիական ու արհեստակցական
միութիւնները սոցիալիստական դաս-
տիարակ ու փորձնական միջոցներ են:
Կօօպերատիւները մասնաւորապէս սո-
ցիալիզմի, սոցիալիստական կեանքի ու
աշխատանքի զարոցների կարելի է հա-
մարել:

16. Սոցիալիստական շարժման ամե-
նահրամայական պահանջներից մէկը
Տ-ժամնայ ըանորական օրն է: Թէ
քաղաքի և թէ դիւղի աշխատատեղերը
Տ ժամից աւելի չպէտք է աշխատեն:
Վնասակար և վտանգաւոր գործերի
մէջ, որպէս հանքերի, գիշերային աշ-
խատանքների մէջ և այլն աւելի քիչ՝
6—4 ժամ պէտք է աշխատեն: Աշխա-
տաւորը պէտք է հանգստանայ, քնել,
կազդուրւել էլ կարողանայ: Նա պէտք
է նաև իր հոգեկան ու մտաւոր կարիք-
ներին էլ բաւարարի: Ուստի և մենք
պահանջում ենք—Տ ժամ աշխատանք,
Տ ժամ քուն, Տ ժամ էլ հանգիստ ու
հոգեկան կեանք:

17. Թէ քաղաքի և թէ գիւղի աշխատաւորների աշխատավարձը կամ օրավարձը պէտք է որոշ չափից պակաս չլինի: Դա պէտք է այնքան լինի, որ աշխատաւորը իր ընտանիքը մարդավայել պահել կարողանայ: Ուստի և պէտք է օրէնքով որոշել՝ թէ անհնաքիչը որքան պէտք է ստանան աշխատաւորները:

18. Պետական օրէնքներով պէտք է ապահովել աշխատանքը առողջապահիկ պահանջների համաձայն. — պէտք է աշխատանքի բոլոր տեղերում առողջապահիկ պայմաններ լինեն — առատ և մաքուր օդ, լոյս, ջերմութիւն և այլն: Օրէնքով պէտք է խստիւ արգելեն գիշերային աշխատանքները (բացի այն աշխատանքներից, որ ընդհատել չի կարելի):

19. Դարձեալ պետական օրէնքներով հովանաւորել ու պաշտպանել կանանց ու անչափահասների աշխատանքները. պէտք է ա) արգիլել նրանց գիշերային աշխատանքները: Կանայք ազատ պէտք է լինին աշխատանքից ծննդաբերութիւնից 6 շաբաթ առաջ և 6 շաբաթ յետոյ:

տոյ, առանց զրկելու աշխատավարձից: Դ) Պէտք է արդիւնէլ մինչև 15 տարեկան աշակերտներին աշխատանքը. իսկ 15—18 տարեկանները 6 ժամէց աւել չպէտք է աշխատեն: Դ) Արգելում են նոյնպէս պայմանաժամից դուրս աշխատանքները: Ե) Աշխատավարձը պակսեցնել չի կարելի իբրև պատիժ կամ տուգանք:

20. Բոլոր աշխատաւորները կիրակի օրերը կատարեալ հանգիստ պէտք է վայելեն: Մահմեդականները — ուրբաթ օրերը:

21. Որպէսզի աշխատաւորների աշխատանքը ամեն կողմից օրէնքներով ապահովւի՝ պէտք է գործարանների վերատեսչութիւնը (ադմինիստրացիան) բանւորները ընտրեն. նրանք պէտք է գործարանների ներքին վարչական գործերում մասնակցութիւն ունենան, որպէսզի կարողանան յիշեալ պահանջները իրականացնել: Բանւորները պէտք է հետևեն, որ աշխատանքն ու աշխատաւորներին պաշտպանող բոլոր օրէնքները հշտութեամբ գործադրւեն:

22. Բայց ուովհետև այդ բոլոր օ-

րէնքներն էլ չեն կարող աշխատաւոր-
ներին ազատել ամեն տեսակ դժբախ-
տութիւններից, որովհետեւ հանքերում
ու մեքենաների մէջ աշխատողների
հետ միշտ էլ դժբախտ դէպքեր կա-
տահին՝ դրա համար էլ պետական օ-
րէնքով գործարանատէրերի և պետու-
թեան հաշուով պէտք է ապահովագրել
աշխատաւորների կեանքը ամեն դժ-
բախտութիւններից — անդամալուծ լի-
նելուց, վնասուելուց, ծերութեան, ան-
գործութեան դէպքում և այլն: Ապա-
հովագրութեան գործերը վարելու են
աշխատաւորները:

23. Բանւորների ընտանիքները ըս-
տանում են ձրի բժշկութիւն — հիւան-
դանոց, բժիշկ, դեղեր և այլն:

24. Գործազուրկներին, նոր և ան-
ծանօթ բանւորների համար հեշտու-
թեամբ աշխատանք ճարելու համար
պէտք է հիմնել աշխատանքի բիւրօներ,
ուր նրանց առանց վնարի ամեն տե-
սակ տեղեկութիւններ և աջակցու-
թիւն պէտք է տրւի:

Պլատֆորմա.—Այս է մեր ծրագրի բովանդակութիւնը։ Տեղի և ժամանակի (մոմենտի) կարիքների համար կուսակցութեան կենտրոնական մարմինները կամ բայոնական ժողովները ծրագրի սկզբունքների համաձայն ընթացիկ և անմիջական պահանջների համար ժամանակաւոր ծրագիրներ են մշակում, որ կոչւում է պլատֆորմա—օր.՝ քաղաքային ընտրութիւնների համար պլատֆորմա։ Պլատֆորմայի պահանջները բղխում են ծրագրի կէտերից։ Դա կուսակցութեան ընթացիկ և մասնակի գործնէութեան ծրագիրն է։

Դասակարգային կոչւ.—Ծրագրի հիման վրայ կուսակցութիւնը կազմակերպում, դասակարգային գիտակցութեան է բերում իր աշխատաւոր դասակարգերին և ղեկավարում է նրանց դասակարգային կռիւը։ Դրա համար կուսակցութիւնը ժողովներ է անում, դասախօսութիւններ կազմակերպում,

քարոզչական գաղափարներ կամ
դպրոցներ բաց անում, կուսակցութեան
ծրագրային կէտերը և առհասարակ գի-
տական հարցեր լուսաբանող թերթեր
և պրականութիւն հրատարակում, ար-
հեստակցական, գիւղացիական, կոօպե-
րատիւ և այլ միութիւններ կազմա-
կերպում, ղեկավարում գործադուլնե-
րը, քաղաքական պայքար մղում, ուր
հնարաւոր է օրինական և օրէնսդրա-
կան (պարլամենտում) և ուր հնարաւոր
չէ՝ յեղափոխական նախապահով:

Եւ վերջապէս ըստ պայմանների յե-
ղափոխութիւն կազմակերպում ու ղե-
կավարում, տապալում թունակալ կոր-
դերը և քաղաքական - կուսակցական
պայքար մղում նոր ժողովրդապետա-
կան կարգերի համար: Այս ամենը աշ-
խատաւորութեան դատակարգային կու-
տարքեր ձևերն են, որի վերջին շըր-
ջանը «սոցիալական յեղափոխու-
թիւնն» է:

Սոցիալական յեղափոխութիւն.—

«Սոցիալական» է կոչուում այն վերջին, մեծ հասարակական յեղաշրջումը, որ պէտք է սոցիալիստական կարգեր հաստատի: Ուստի դա կարող է կոչուել նաև սոցիալիստական յեղափոխութիւն: «Սոցիալիստական» յեղափոխութիւն աւելով կամեցել են շեշտել, որ դա ոչ թէ լոկ «քաղաքական» — պետական ձևերի, այլ խմբողջ հասարակական — «սոցիալ»-տնտեսական կարգերի փոփոխութիւնն է լինելու: Սոցիալիստական յեղափոխութիւնը, ինչպէս ասացինք, դասակարգային յամառ և անհաշտ կռիւ վերջին մեծ արտայայտութիւնն է լինելու: Դրան հասնել կարելի է նաև հանապազօրեայ և անդուլ կռուով և երկրորդ՝ բոլոր ժողովուրդների հետ միասին: Սոցիալիստական յեղափոխութիւնը միջազգային յեղափոխութիւն է լինելու: Միայն մի ժողովուրդ ինքն իր համար, տնավարի սոցիալիստական

յեղափոխութիւն անել, ուրեմն սոցիա-
լիզմը իրականացնել իր երկրում չի
կարող: Հարեան երկրների կապիտա-
լիստական տնտեսութիւնն ու կառա-
վարութիւնները այդ թոյլ չեն տայ:
Այդ անկարելի բան է:

Դասակարգային կռիւը իր դարդաց-
ման վերջին աստիճաններին է մօտե-
նում: Եւ մի գեղեցիկ օր Սոցիալիստա-
կան Մեծագոյն Յեղափոխութիւնը կը-
խորտակի բոլոր ճնշումների հիմքը—
«մասնաւոր սեփականութեան» կարգը
և դրա տեղ համայնական սեփականու-
թեան կարգը կհաստատի: Կապիտալիզ-
մի սւերականի վրայ Սոցիալիզմի նոր
կեանքի նոր Արշալոյս կծագի:

ՀՀ Ազգային գրադարան



NL0836109

13

W92

18

Գինն է

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ

Գրադարան «Աշխատատեղ»-ի
 ԼՈՅՍ ՏԵՍԱԻ № 4

ԺԱՆ ԺՕՐԷՍ

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ

ԳԱՂԱՓԱՐԸ

Թարգ. և ռուս. Յ. Տէր-Բարաճէլեանց
 Գինն է 10 կոպ.

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ «Աշխատատեղ»-ի գրա-
 դարանի գրքոյկները

1. Ե. Բրեշկո-Բրեշկովսկայա. — Ինչ
 պէտք է անել Հիմնադ. Ժողով. 5 կ.
2. Ն. Ա. Բուրակին. — Հողի սեփական-
 նութիւնը և համայնական սեփական-
 նութիւնը. 10 կոպ.
3. Մ. Խորէնի. — Ինչէ սոցիալիզմը
 գինն է 15 կոպ.

Դիմել՝ Тифлисъ, редакция «Ашхата-
 воръ», Могнинская ул.